ԵԴ/8633/02/23

ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏԵԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 մարտի 2023թ. ք.Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /այսուհետ՝ դատարան/, նախագահությամբ դատավոր Ալֆրեդ Վարդանյանի, ծանոթանալով <<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերության հայցադիմումին.

## ՊԱՐԶԵՑ

<<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերությունը 2023թ. մարտի 07-ին դատարան է ներկայացրել հայցադիմում ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 06.10.2022թ-ին <<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 1 որոշումն անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին:

Նշված հայցադիմումը դատավոր Ա.Վարդանյանի աշխատակազմին է հանձնվել 2023թ. մարտի 09-ին:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122 հոդվածների պահանջներին համապատասխան, ինչպես նաև համապատասխանում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով սահմանված պահանջներին:

Հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:*

*ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի*

*միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:*

Տվյալ դեպքում, առնվազն հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում, առկա չէ գործը գրավոր ընթացակարգով քննելու անհնարինություն, հետևաբար դատարանը գտնում է, որ գործը ենթակա է քննության գրավոր ընթացակարգով: Միաժամանակ, գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 2023թ. ապրիլի 26-ին:

*Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125, 199-200, 201, 234.5-234.9 և 361 հոդվածներով՝ դատարանը*

ՈՐՈՇԵՑ

1. <<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 06.10.2022թ-ին <<Նարգիզյան Շին>> ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված թիվ 1 որոշումն անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Գործի քննության արդյունքով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով 2023թ. ապրիլի 26-ին:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱԼՖՐԵԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ